

2126.214247



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«24» 03 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0 063-21

Ձեռնարկողը՝

«Երևաննախագիծ» ՓԲԸ
Ք. Երևան, Բուզանդ 1/3

Գործունեությունը՝

Լենինգրադյան փողոցի և Նոյ թաղամասի միջանկյալ
հատվածի ճանապարհային և ինժեներական
հաղորդակցուցիչների կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

<24> 03 2021թ.

Համաձայն նախնական գնահատման հայտի ուսումնասիրվող տեղական միջավայրի և համայնքի տնտեսական, մշակութային, բնական, պատմամշակութային, աշխարհային և տեղական ժառանգության, ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների կողմից ներկայարանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական և ժամանակակից մեղմ



պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆրակցիաներով:

Հետազոտության տվյալների համաձայն կառուցապատող տարածքը բարենպաստ է շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Համաձայն գնահատման հայտի կառուցապատման տարածքը հարում է «Դալմայի այգիներ» նորահայտ հուշարձանի տարածքին միմյանցից բաժանվելով նախագծային ճանապարհով, որը միացնելու է Մոնթե Մելքոնյան անընդհատ երթևեկության մայրուղին Տիչինայի փողոցին: Հուշարձանի տարածքով անցնող ճանապարհի հատվածում ստորգետնյա հաղորդակցման ուղիներ չեն նախատեսվում, իսկ դրանց անհրաժեշտության դեպքում, աշխատանքներն իրականացվելու են հնագետի հսկողությամբ:

Հարավային հատվածում նախագծային տարածքի սահմանը շրջանային նշանակության մայրուղային ճանապարհ է, որը կապում է Մ. Մելքոնյան փողոցը Սեբաստիա փողոցին: Որից մոտակա բնակելի տունը գտնվում է 31-43մ հեռավորության վրա: Հյուսիսային մասում՝ նախագծի սահմանագիծը տեղական նշանակության ճանապարհ է, նվազագույն հեռավորությունը բազմաբնակարան շենքերից 5-6մ է: Արևելյան կողմում հեռավորությունը հասարակական շենքերից մոտ 50մ է: Արևմտյան կողմում մինչև մոտակա բազմաբնակարան բնակելի կառուցապատումը մոտ 33մ է:

Փաստացի, նախագծային ամբողջ տարածքը սեփականության իրավունքով տրամադրվել է կառուցապատման նպատակով տարբեր կառուցապատողների, հիմնականում բազմաբնակարան բնակելի շենքերի շինարարության համար: Ընդհանուր առմամբ թաղամասը նախատեսված է 18.420 հազ. բնակչի համար:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում է ճանապարհների կառուցում, գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անցկացում:

Փողոցային ցանցը նախագծվել է համաձայն գործող ՀՀՇՆ 30-01-2014 (Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցում) նորմերի պահանջներին:

Փողոցային ցանցը բաղկացած է 11 ուղիներից, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է՝ 3940մ, իսկ մակերեսը՝ 41315մ² (ներառյալ մայթերը), փողոցները համարակալված են ուղի 1-ից մինչև ուղի 11:

Նախատեսված փողոցային ցանցի ուղիների ճանապարհային պատվածքի ընդհանուր մակերեսը կազմում է 22993մ²: Ճանապարհի պատվածքի շերտերի չափորոշիչներն են՝

- | | | |
|---------------------------------|---------|---------------------|
| - Ավազակոպճային հարթեցնող շերտ- | 10սմ, | 2886մ ³ |
| - Խճային հիմք | - 12սմ, | 22993մ ² |
| - Խիճ տոգորված բիտումով | - 4 սմ, | 22993մ ² |
| - Խոշորահատիկ ասֆալտբետոն | - 6 սմ, | 22993մ ² |
| - Մանրահատիկ ասֆալտբետոն | - 4 սմ, | 22993մ ² |

Մայթերի լայնություններն ըստ ուղիների հետևյալն են՝

- 1, 2, 7, 8,9, 10, 11 ուղիներում 1.5մ,
- 3, 4 ուղիներում 2.25մ,
- 5 ուղիում 4.5մ:

Մայթի ծածկն ամբողջ փողոցային ցանցի ուղիների համար կազմում է 12502մ² և ունի հետևյալ կառուցվածքը՝

- Խճային շերտը 10սմ,
- Տաք մանրահատիկ ասֆալտբետոն 3 սմ:

Նախագծված մայթերը երթևեկային մասից բաժանվում են բետոնային հիմքով և քարե թափարկերով, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 6782սմ:

Նախատեսվում է բերմայի կառուցում հետևյալ չափորոշիչներով՝



- բետոնե 10x20 թաքնված եզրաքարերի իրականացում՝ բետոնե հիմքով 465գծմ բերմայի հարթեցում 117մ²:

Բակային ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի անցկացումն իրականացվելու է համաձայն «Վեոլիա-Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների: Համաձայն հայտի թաղամասի ջրամատակարարումը նախատեսված է իրականացնել Մեծարենցի փողոցով անցնող $\Phi 800$ մմ պողպատե ջրագծից $\Phi 159$ մմ խողովակով, ջրագծի միացումից հետո նախատեսված է պոմպակայաններ տեղադրում: Նախագծված ցանցի միացման հանգույցներում, խաչմերուկներում հակահրդեհային հիդրանտների տեղադրման համար նախատեսված են ջրամատակարարման հորեր՝ համապատասխան տրամագծերի: Ցանցն ունի օղակավորված և փակուղի գոտիներ: Ցանցերի համար նախատեսված են պոլիէթիլենե խողովակներ՝ $\Phi 32-219$ մմ: Խողովակների թաղման միջին խորությունը հողի նիշից ընդունվել է 1.30մ ավազի նախապատրաստական շերտով:

Թաղամասի կոյուղու ցանցը նախատեսվում է միացնել Մեծարենցի փողոցին զուգահեռ անցնող $\Phi 1400$ մմ և $\Phi 800$ մմ կոյուղատարերին և Մոնթե Մելքոնյան փողոցով անցնող $\Phi 500$ կոյուղատարին՝ պոլիէթիլենե $\Phi 150-400$ մմ խողովակներով: Թաղման միջին խորությունը հողի նիշից ընդունվել է 1.70մ ավազի նախապատրաստական շերտով:

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը նախատեսված է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով:

Նախագծով նախատեսվում է Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցի և «ՆՈՅ» թաղամասի միջանկյալ հատվածի տարածքի ներթաղամասային ստորգետնյա Մ/Ճ գազաֆիկացում, ինչը կատարվելու է համաձայն նախագծային առաջադրանքի: Գազատարի խորությունն ընդունվել է ըստ երկայնական կտրվածքների՝ ելնելով ուղղաձիգ համահարթեցման նիշերից:

Համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի, գազամատակարարումը $P=0.3$ ՄՊա ճնշման և $Q=10207$ խմ/ժամ նախատեսվող ծախսով իրականացվելու է Երևան-4 ԳԲԿ-ն սնող պ-500մմ կողմնատար-գազատարի 0.1կմ-ից, կառուցելով մոտ 14 կմ գազատար և գործարանային արտադրության, համապատասխան հզորության գազաբաշխիչ կայան ԳԲԿ: Նախատեսված է իրականացնել միջթաղամասային գազամատակարարման ամբողջ համակարգն օղակավորումով մ/ճ գազատարներով: Հետագայում յուրաքանչյուր շենք-շինության մոտ տեղադրելով համապատասխան հզորության գազի ճնշման կարգավորիչ:

Համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ տեխնիկական պայմանների, նախատեսվում է էլեկտրամատակարարման անցկացում՝ հատվածների հաշվարկային հզորությունների համապատասխան $10/0.4$ կՎ տրանսֆորմատորային ենթակայանների տեղադրում:

Կիրառվելու է ենթակայանների սնուցման օղակային սխեմա-110/10 կՎ սնող կենտրոնում նախատեսվում է զբաղեցնել թվով 6 հատ 10 կՎ բքիջ (3 օղակ): 1 օղակով սնվող ենթակայանների քանակը 3-ից 5 է՝ 3-4 մՎԱ հաշվարկային հզորությամբ:

10 կՎ խրամուղիների ընդհանուր երկարությունը 2050մ է, որից երկուսը 900մ մալուխային է, 3 մալուխային 800մ, 4 մալուխային 350մ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում է ընդհանուր 12 (քարե շենք ե/բ ծածկով $10 \times 6 \times 3.5$ (հ)մ, 60 մ² մակերեսով) ենթակայանի կառուցում (2×630 կՎԱ-2 հատ, 2×1000 կՎԱ-9 հատ, 2×1600 կՎԱ-1 հատ): Ենթակայանները լինելու են չոր տիպի տրանսֆորմատորներով, որոնք էկոլոգիապես անվտանգ են, ունեն աղմուկի և վիբրացիայի ցածր մակարդակ:

Նախագծով նախատեսված է թաղամասի արտաքին լուսավորություն, որպես տնտեսական լուսավորության ղեկավարման պահարան նախագծում կիրառված են կոմպակտ սարքեր (2 հատ), որոնց միջոցով հնարավոր է լուսավորության ղեկավարումը հեռակառավարման



եղանակով: Նախագծում կիրառված են 9մ բարձրության ցինկապատ հենասյուներ: Որպես լույսի աղբյուր նախատեսված են լուսադիֆուզային լուսատուներ 129Վտ հզորության:

Համաձայն հայտի հետագայում կառուցապատվող տարածքի էլեկտրամատակարարման համար (10.5մՎԱ) կառուցվելու է 110/10կՎ ենթակայան, որի հզորությունը որոշվելու է, հաշվի առնելով հարակից տարածքները, ինչն այս փուլում նախատեսված չէ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար, ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ շինարարական աշխատանքները իրականացվելու են 2՝ նախապատրաստական և հիմնական փուլով: Շինարարական աշխատանքները տևելու են 24 ամիս:

Նախապատրաստական փուլում կատարվելու են հետևյալ աշխատանքները.

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով,
- շինարարական նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում,
- շինարարական հրապարակի գիշերային լուսավորվածություն,
- ժամանակավոր շինությունների տեղադրում:

Շինարարական հրապարակում չի նախատեսվում շինանյութերի, կամ սորուն նյութերի պահեստներ:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ ավտոինքնաթափ մեքենա, ասֆալտոփիչ սարքավորում, տոփանիչ գլոն, ավտոմոբիլային կոունկ, էքսկավատոր, բուլդոզեր և այլն: Շինարարական հրապարակի մակերեսը կազմելու է 800մ², որտեղ պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու են շինարարության համար նախատեսվող համապատասխան շինտեխնիկան, ժամանակավոր շինությունները և այլն:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավեցման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Զրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու են քաղաքային ցանցերին միանալուց հետո: Այդ միացումները կատարվելու են առաջնահերթ: Աշխատողների թիվը շինարարության տարբեր փուլերում տատանվում է 2000-ից մինչև 3000 հոգի: Որպես միջին թիվ ընդունվել է 2500 հոգի, որից 125-ը ինժեներա-տեխնիկական անձնակազմ: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (125 մարդ), ինչը կազմում է 15957.5մ³/տարի, միջին օրեկան 59.37մ³: 800մ² տարածքի ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 576մ³/տարի: Կենցաղային կեղտաջրերի ծավալը հաշվարկվել է միջին օրեկան 56.29մ³: Շինարարությունն իրականացնող անձնակազմն օգտվելու է ժամանակավոր տնակներից, որոնք տեղադրվելու են մինչև շինարարական աշխատանքների սկիզբը և միացվելու են տարածքում առկա ջրագծին և կոյուղուն:

Շինհրապարակներում աշխատողների կենցաղային կեղտաջրերի հեռացման համար շինհրապարակի տարբեր հատվածներում տեղադրվելու է շարժական բիոզուգարաններ: Ըստ անհրաժեշտության կեղտաջրերը տեղափոխվելու են մոտակա կոյուղու ցանց: Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը նախատեսված է կազմակերպված երկրագործական հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով:



Տարածքի ցածրադիր տեղերում տեղադրվելու են անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը հեռացվելու են տարածքից և համաձայն տեխնիկական պայմանի միացվելու են քաղաքային հեղեղատար ցանցին:

Նախատեսվող գործունեությունը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Տարածքի մշակման ենթակա գրունտները պատկանում են III, VI կարգին: Գրունտների մշակումը փոսորակում և խրամուղիներում իրականացվելու է «հետ-բահ» էքսկավատորով: Հետիցքի իրականացման համար օգտագործվելու են գրունտի փափուկ բնահողերը: Շինարարական աշխատանքների ժամանակ շինհրապարակից հանվող հանույթի, մշակվող գրունտի ծավալն ընդհանուր կկազմի 35263մ³, հետիցքի ծավալը կկազմի՝ 5614մ³, որը կարճաժամկետ պահվելու է շինարարական հրապարակում և օգտագործվելու է որպես հետիցք: Գործունեության ընթացքում կենցաղային աղբի ընդհանուր ծավալը կկազմի 33տ: Այն կհավաքվի կենցաղային աղբի համար նախատեսված աղբամաններում և կանոնավոր կերպով կհեռացվի շինարարական հրապարակից:

Շին.աղբի ծավալը կազմում է՝ 2901տ (վտանգավորության IV դաս), ինչն ինքնաթափերի միջոցով անմիջապես տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում վտանգավոր թափոնների առաջացումը և հնարավոր ազդեցությունները բացառելու նպատակով շինարարության ընթացքում քսայուղերը, հեղուկ վառելիքը պահվելու են փակ տարաներով և անթափանց հիմքերի վրա (բետոնե, մետաղական կամ ավազե), ինչը կբացառի հողային շերտի հնարավոր աղտոտումը: Շինաշխատանքների ավարտից հետո նշված նյութերի մնացորդային քանակները որպես երկրորդային նյութ օգտագործվելու են շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում:

Համաձայն հայտի թաղամասի համար մշակվելու է տարածքի բարեկարգման, վերականգնման, կանաչապատման պլան՝ Երևանյան լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին համապատասխան: Կանաչապատման աշխատանքներն իրականացվելու են հետագայում՝ տարբեր կառուցապատողների կողմից, այս նախագծի շրջանակներում կանաչապատում չի նախատեսվում:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում օրական 2 անգամ,
- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ,
- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,
- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտադրանքի բացառելու համար,



- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև ապահովել դրանք տեխնիկական նորմալ վիճակի շահագործումը,

- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,

- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն նախնական հայտի Լենինգրադյան փողոցի և Նոյ թաղամասի միջանկյալ հատվածի ճանապարհային և ինժեներական հաղորդակցույցները կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Համաձայն ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի եզրակացության՝ ճանապարհի նշված հատվածը կառուցվելու է հողալիցք կատարելու միջոցով, այդ իսկ պատճառով մշակութային շերտեր կամ կառույցների մնացորդներ չեն վնասվելու:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոգերակառուցության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է աշխատանքները կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը, ինչպես նաև հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

- Բնակելի թաղամասի կառուցապատման ընթացքում հնարավոր նախատեսվող գործունեությունները, որոնք կհամապատասխանեն Օրենքի 14-րդ հոդվածի պահանջներին (ենթակայանի կառուցման 110/10կվ լարման էլեկտրահաղորդման գծեր, շենքեր և այլն), ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

- Հուշարձանի տարածքով անցնող ճանապարհի հատվածում՝ զերծ մնալ ստորգետնյա հաղորդակցման ուղիներ նախատեսելուց, իսկ դրանց անհնարինության դեպքում աշխատանքներն իրականացնել հնագետի հսկողությամբ, ինչպես նաև առաջնությունը ՀՀ



կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Երևաննախագիծ» ՓԲԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոցի և Նոյ թաղամասի միջանկյալ հատվածի ճանապարհային և ինժեներական հաղորդակցուցիչների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝



Ա. Վարդանյան